«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն մոտեցման համատեքստում »

Դաստիարակ՝ Վարսիկ Դավթյան

Մանկապարտեզ՝ « Բջնի մսուր մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ..... 2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3
ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ..... 4
Գլուխ 2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ..... 8
ԴԻՏԱՐԿՈՒՄ ..... 11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 13
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթությունը երեխայի կյանքում ունի շատ կարևոր նշանակություն: Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրևությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը և աշխատանքից էսթետիկական հաճույք ստանալ:Նախադպրոցական տարիքի երեխան շրջապատող աշխարհը ընկալում է ամբողջությամբ: Ներկայումս կրթության համակարգում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են նոր մոտեցումներ, նոր բարեփոխումներ, որոնք կնպաստեն կրթության որակի բարձրացմանը: Բնականաբար նախադպրոցական հաստատություններում կրթադաստիարակչական գործընթացի իրականացումն այսօր դաստիարակից պահանջում է որոնել երեխաների ճանաչողական գործունեության կազմակերպման նոր և արդյունավետ ձևեր և մեթոդներ: Դա է պատճառը, որ վերջին տարիներին աճել է հետաքրքրությունը ինտեգրված պարապմունքների նկատմամբ: Այս տիպի պարապմունքները կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված պարապմունքների միջոցով հնարավոր է դառնում ձևավորել կենսականորեն անհրաժեշտ զանազան հմտություններ:

<<Մենք ինքներս պետք է հավատանք այն ամենին, ինչ սովորեցնում ենք մեր երեխաներին>>:

# ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

<<Ինտոգրում>>(Integration) լատիներենից թարգմանաբար նշանակում է վերականգնում, համալրում, նշանակում է համատեղել գիտելիքները կրթական ոլորտներից հավասար հիմունքներով՝ լրացնելով միմյանց:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս հստակ պատկերացումներ ձևավորել ուսուցանվող նյութի մասին արթնացնում են հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուումնական նյութերի տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Ժամանակակից գրականության մեջ տարբերակում են միավորված (ինտեգրված) պարապմունքի հետևյալ տեսակները.

- Միջառարկայական (երկու առարկաների միջև՝ օրինակ՝ մաթեմատիկա, ապլիկացիա)
- Բազմառարկայական (երկուսից ավել առարկաների միջև՝ օրինակ՝ խոսքի զարգացում, նկարչություն, երաժշտություն):

Ինտեգրված պարապմունքների դրական կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ այն անցկացվում է խաղերի տեսքով՝ իր մեջ ներառելով մի շարք շարժողական, գործուն իրավիճակներ, դինամիկ դադարներ, աշխուժացնող, շարժական և թատերական խաղեր:

Նախադպրոցական բոլոր տարիքային խմբերում հնարավոր է ինտեգրված պարապմունքների իրականացումը. կարևորն այն է, որ դաստիարակը կարողանա այդ աշխատանքն իրականացնել երեխաների հետ, ընտրի ճիշտ թեմա,

բովանդակություն՝ բնականաբար հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները:

Ինտեգրված պարապմունքների առանձնահատկություններն են.

1. Նախ և առաջ այն հստակեցնում է ուսումնական նյութերի մեծ տեղեկատվությունը, որի շնորհիվ իրականացվում է նախադպրոցական սկզբունքների հիմնական հատկանիշներից մեկը. պարապմունքը պետք է լինի ոչ մեծ ծավալով, բայց ընդարձակ, որ հնարավոր լինի կիրառել ինտեգրման սկզբունքը:
2. Շրջապատող աշխարհին ինտեգրված պարապմունքների ժամանակ ընկալվում է իր բազմազանությամբ և միօրինակությամբ՝ ապահովելով երեխայի ամբողջական պատկերացումները ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև:
3. Գործունեության տարբեր տեսակների շնորհիվ ինտեգրված պարապմունքների ընթացքում վերանում են հոգնածությունը և լարվածությունը:
4. Ազատ ժամանակ է մնում լրացուցիչ պարապմունքների և խաղերի համար:
5. Ինտեգրված պարապմունքները ինքնահաստատման հնարավորություն են տալիս ոչ միայն դաստիարակներին, այլ նաև երեխաներին:
6. Պարբերաբար անցկացվող ինտեգրված պարապմունքները նպաստում են խոսքի զարգացմանը: Նրա մեջ ձևավորվում է համեմատելու, ընդհանրացնելու, եզրկացնելու կարողություններ, ինչպես նաև վերանում է լարվածությունը, ծանրաբեռնվածությունը, ընդլայնվում է մտահորիզոնը:
7. Ինտեգրված պարապմունքները հիմնվում են նոր կապերի վրա, որոնք հաստատում կամ խորացնում են նախապես արված եզրահանգումները:
8. Երաժշտությունը, նկարչությունը, գրականությունը ապահովում են նախադպրոցականի զգայական դաշտի զարգացումը:

Դաստիարակը ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս պետք է հաշվի առնի հետևյալը.

- ✓ որ թեման համապատասխանի երեխաների հետաքրքրություններին,
- ✓ ընտրված թեման անհրաժեշտ է անցնել այնպես,որ ներգրավված լինեն բոլոր երեխաները,
- ✓ ընտրված թեման նպաստի երևակայության, ստեղծագործական մտածողության զարգացմանը,
- ✓ երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու և ստանձնեն պատասխանատվություն որևէ բան անելու,
- ✓ Երեխաները կարողանան ավելացնել իրենց գիտելիքները ու փորձը:

Ինտեգրված պարապմունքները դաստիարակի և հոգեբանի, մանկավարժի, երաժշտական ղեկավարի, լոգոպեդի և ֆիզկուլտուրայի հրահանգչի համատեղ աշխատանքի արդյունքն են: Այսինքն՝ մանկավաևժական գործընթացը, որը հիմնված է ինտեգրման սկզբունքների վրա, խթանում է բոլոր մասնագետների ամուր կապը: Հիմնական շեշտը դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների յուրացման, որքան ստեղծագործական մտածողության վրա:

Ինտեգրված պարապմունքների կարևոր առանձնահատկություններից է նաև երեխաների շարժունության ապահովումը՝ մանկական գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ հեքիաթի բեմականացում, դեկորացիաների պատրաստում, հայտնի բանաստեղծությունների հիմքով ստեղծված երգերի ունկնդրում, մշակույթի և նկարչության ստեղծագործությունների դիտում:

Ինտեգրված պարապմունքների հիմնական խնդիրներ են.

- երեխայի համակողմանի դաստիարակության կոնկրետ առարկաների մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը,
- տարբեր հասկացությունների ինտեգրմամբ գործունեության տարբեր ձևերում երեխային ընդգրկելը:

Թեմատիկ ինտեգրված պարապմունքը առավել ակտիվ ձև է, որի ընթացքում երեխան ձեռք է բերում

1. հոգատարություն շրջակա միջավայրի նկատմամբ,

2. թիմում աշխատելու կարողություն,
3. դիմացինին լսելու կարողություն,
4. ինքնուրույնություն,
5. խոսքը ճիշտ ձևակերպելու կարողություն,
6. վերլուծելու կարողություն

# Գլուխ 2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսակը՝ Խոսքի զարգացում և կառուցողական աշխատանք

Խումբ՝ Կրտսեր I

Թեմա՝ <<Հյուր է եկել արջուկը>>

Տևողություն՝ 20-25 րոպե

Նպատակ՝

- Սովորեցնել լսել ու հասկանալ պատմությունը
- կողմնորոշվել խմբասենյակում
- սովորել աշխատել համագործակցելով, միմյանց աջակցելով
- բառապաշարի հարստացում նոր բառերով

Մեթոդներ՝ անհատական, մեծ խմբերով, փոքր խմբերով

Անհրաժեշտ նյութեր

- խաղալիք արջուկ՝ մեծ և փոքր,
- մեծ պաստառ անտառի տեսարանով,
- կառուցողական նյութեր, մեծ խաղադեկորներ, լեգոներ,
- խմբի կանոնակարգի պաստառ:

<u>Խթանման փուլ</u>

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

-Երեխանե՛ր, ովքե՞ր են գնացել կենդանաբանական այգի, ո՞վ է տեսել այնտեղ արջին:

Երեխաները դաստիարակի օգնությամբ փորձում են պատասխանել հարցերին: Այնուհետև դաստիարակը ցուցադրում է արջուկի նկարը, որից հետո նկարագրում է արջին, որտեղ է արջը ապրում, ինչ է ուտում:

Աշխատանքի տևողությունը 3-4 րոպե:

Իմաստի ընկալման փուլ

-Հիմա ես ձեզ կպատմեմ մի հեքիաթ արջուկի մասին:

Խոր անտառում իր մեծ ընտանիքի հետ ապրում էր արջուկը, որը շատ շարժուն էր և անկարգ, երբեք չէր լսում ծնողներին, մեծ քույրերին ու եղբայրներին: Մի անգամ նա հեռանում է իրենց որջից, շփոթում է դեպի տուն տանող արահետը և մոլորվում է անտառում: Որոշում է բարձրանալ բարձր ծառի ճյուղին, որպեսզի լավ տեսնի տեղանքը, որ գտնի տան ճանապարհը, բայց ճյուղը չի դիմանում արջուկի ծանրությանն ու կոտրվում է: Արջուկն ընկնում է վերևից և այնքան է գլորվում, որ հայտնվում է անտառից դուրս...

Դաստիարակը խմբասենյակի պատուհանագոգից վերցնում է արջուկին և ասում է.

-Քանի որ արջուկը հեքիաթային է, նա մոլորվել է, հայտնվել է մեր խմբասենյակում: Եկեք արջուկին բացատրենք, որ չի կարելի մեծահասկներին չլսել, տանից դուրս գալ առանց զգուշացնելու, որ ներս մտնելիս պետք է բարևել: Եկեք բացատրենք արջուկին, որ խաղալուց հետո պետք է հավաքել

խաղասենյակը: Տեսնե՞ս արջուկը օգնում է իր մայրիկին: Երեխանե՛ր, եկեք ասենք արջուկին, որ պետք է օգնել մայրիկին:

Ֆիզկուլտ դադար <<Գնում ենք ճանապարհորդության>>

Խաղը վարում է դաստիարակը: Երեխաները կանգնում են մեկը մյուսի հետևից: Խումբը գնում է դեպի ճամփորդության: Ճանապարհին հանդիպում են տարբեր կենդանիների: Եվ փորձում են նմանակել նրանց շարժումները՝ ցատկոտում են

նապաստակի նման, արջի նման քայլում, գայլի նման ոռնում և այլն: Խաղի ավարտից հետո նստում են սեղանների շուրջ:

Դաստիարակը երեխաներին առաջարկում է պատրաստել արջի որջեր, որպեսզի արջուկը ապրի այնտեղ:

Կառուցողական նյութերը նախապես դրված են լինում սեղանին: Աշխատանքը սկսելուց առաջ դաստիարակը երեխաների հետ քննարկում և որոշում է, թե ինչպես պետք է կառուցեն որջը: Աշխատանքի ընթացքում դաստիարակը օգնում երեխաներին: Ավարտելուց հետո արջուկներին տեղավորում են որջերի մեջ:

Դաստիարակ՝

- Դե եկեք հրաժեշտ տանք արջուկին , ասենք ցտեսություն:

<u>Կշռադատման փուլ</u>

Դաստիարակի հետ միասին երեխաները շրջում են խմբասենյակում և դիտում մյուսների կատարած աշխատանքները:

# ԴԻՏԱՐԿՈՒՄ

Պարապմունքը մեթոդապես ճիշտ էր կառուցված, պահպանված էին ԽԻԿ համակարգի փուլերը: Պարապմունքի շնորհիվ երեխաները ծանոթացան վայրի կենդանիներից արջի, գայլի, նապաստակի հետ, որոշակի գիտելիքներ ձեռք բերեցին անտառին մասին: Չնայած երեխաների մեծ մասի մոտ բացակայում էր խոսքը ,այնուամենայնիվ ուշադիրն լսում էին դաստիարակին, հետևում նրա հրահանգներին:

Դաստիարակը ստեղծել էր անկաշկանդ մթնոլորտ, որտեղ երեխաները ազատ էին զգում իրենց:

Երեխաները մեծ ոգևորությամբ անցան կառուցողական աշխատանքին:

Դաստիարակը հասավ իր նպատակին:

Պարապմունքը գնահատվեց «լավ»:

Տնօրեն՝ Ռուզաննա Աբովյան

Պարապմունքը իրականացվել է կրտսեր առաջին խմբում դաստիարակ Վարսիկ Դավթյանի կողմից:

Դաստիարակը երեխաների մեջ հետաքրքրություն մտցնելու և բոլորին ներգրավելու նպատակով խմասենյակի մի անկյունում ստացել էր անտառային տեսարան: Առկա էին պարապմունքին համապատասխան դիդակտիկ նյութեր: պարապմունքը սկսեց նկարագրելով արջուկին: Ճիշտ հարցադրումների շնորհիվ նա երեխաների մոտ դասիարակեց բարեկիրթ վարվեցողություն: Պարապմունքի ամբողջ ընթացքում երեխաների մի մասը ակտիվ էր, կային խոսք չունեցող երեխաներ: Հիմնականում ակտիվություն ցուցաբերեցին ճիշտ ընտրված ֆիզկուլտ դադարի ժամանակ: Այնուհետև անցան կառուցողական աշխատանքի, որի ընթացքում դաստիարակը երխաներին բաժանում է խմբերի և նստեցնում

աշխատանքային սեղանների շուրջ: Աշխատանքի ընթացքում դաստիարակը օգնում էր դժվարցող երեխաներին:

Պարապմունքը ինտեգրված էր,ուսուցման այս ձևը շատ եմ կարևորում քանի որ այս ձևը մի շարք կապեր է հաստատում առարկաների և երևույթների միջև: Ինտեգրումը օգնում է տվյալ թեմայի շուրջ ձեռք բերել հիմնական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակին, չնայած, որ վերջինս ընդամենը երկու ամսվա աշխատող էր:

Պարապմունքը գնահատվեց «լավ»:

Մեթոդիստ՝ Վարդուհի Դալլաքյան

Դաստիարակը պարապմունքը սկսեց արջուկի մասին զրույցով: Պարապմունքը մեթոդապես ճիշտ էր ընտրված, պահպանվաշ էին ԽԻԿ համակարգի փուլերի միջև եղած ժամանակահատվածները:

Երեխաները իրենց տարիքին համապատասխան մասնակցություն ցուցաբերեցին պարապմունքին, շնորհիվ ճիշտ ընտրված մեթոդների:

Դաստիարակը հասավ իր նպատակին՝երեխաներին տալով գիտելիքներ արջի մասին և նրանց մոտ դաստիարակելով ճիշտ վարքագիծ:

Պարապմունքը գնահատվեց «լավ»:

Դաստիարակ՝ Անի Պետրոսյան:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտության ավարտին եկա այն եզրակացության, որ ինտեգրված պարապմունքը գործունեություն է, որն ուղղված է որոշակի թեմայի ամբողջական բացահայտմանը՝ տարբեր տեսակի գործունեության միջոցով:

Եվ վերջապես ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներից մեկին՝ կրթությունը պետք է լինի փոքր ծավալով, բայց տարողունակ:

Ինտեգրված պարապմունքը դառնում է գրավիչ դերախաղ,քննարկում, ոչ թե զուտ գիտելիքների ծավալի հաղորդում: Ինտեգրված ուսուցման նպատակն այն է,որ երեխաները ոչ թե պետք է նայեն, լռեն, լսեն, երբեմն էլ խոսեն, այլ առավելապես պետք է մասնակցեն,աշխատեն և պատասխանատվություն ստանձնեն: Այսինքն երեխայակենտրոն ուսուցմանը նպաստող քայլերից մեկն է համարվում ինտեգրված պարապմունքները:

Հետագա աշխատանքների ընթացքում կուզեի, որ դաստիարակները ավելի շատ օգտվեին ինտեգրված պարապմունքի օգնությունից, քանի որ այն ավելի շատ հետաքրքրություն է առաջացնում երեխաների մոտ, ավելի հեշտությամբ է ընկալվում նոր տեղեկատվությունը:Եվ վերջապես ժամանակը ավելի արդյունավետ է օգտագործվում, քանզի ժամանակը թանկ է, իսկ մեզ վստահված է աշխարհի ամենակարևոր աշխատանքներից մեկը՝ կրթել և դաստիարակել աճող սերնդին այնպես, որ վեհ արժեքների կրողներ դառնան:

Ես հասա իմ վերջնարդյունքին, քանի որ երեխաները յուրացրեցին թեման, պատասխանեցին իմ հարցերին, թե որն է ճիշտ, որն է սխալ: Քանի որ մեր խմբում շատերը չունեն կապակցված խոսք, ինձ ուրախացրեց այն փաստը, որ երեխաները կարողացան հասկանալ թեման և հնարավորինս պատասխանել իմ հարցերին: Այսինքն երեխայակենտրոն ուսուցմանը նպաստող քայլերից մեկն է համարվում ինտեգրված պարապմունքները:

Հետագա աշխատանքների ընթացքում կուզեի, որ դաստիարակները ավելի շատ օգտվեին ինտեգրված պարապմունքի օգնությունից, քանի որ այն ավելի շատ հետաքրքրություն է առաջացնում երեխաների մոտ, ավելի հեշտությամբ է ընկալվում նոր տեղեկատվությունը: Եվ վերջապես ժամանակը ավելի արդյունավետ է օգտագործվում, քանզի ժամանակը թանկ է, իսկ մեզ վստահված է աշխարհի ամենակարևոր ածխատանքներից մեկը. կրթել և դաստիարակել աճող սերնդին այնպես,որ վեհ արժեքների կրողներ դառնան:

Ես հասա իմ վերջնարդյունքին, քանի որ երեխաները յուրացրեցին թեման, պատասխանեցին իմ հարցերին, թե որն է ճիշտ, որն է սխալ: Քանի որ մեր խմբում շատերը չունեն կապակցված խոսք, ինձ ուրախացրեց այն փաստը, որ երեխաները կարողացան հասկանալ թեման և հնարավորինս պատասխանել իմ հարցերին:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան- Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար,Երևան 2005թ. 198-199 **էջ**
2. 3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ Երևան 2018
3. Նախաշավիղ-3, 37-45 էջ
4. https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D5%A3%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6